**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

03.03.2020թ.
ժամը $10^{00}$

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ԻՀՔ միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զադոյան,
ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Ամիրյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Ա. Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| 2 | «Մեգիէլ» ՍՊԸ |
| 3 | «ՄԱԺԷՎ» ՍՊԸ |
| 4 | «Կոմպասս» ՍՊԸ |
| 5 | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ |
| 6 | «Այունեթվորքս» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.*

**2 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Բոլոր մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացի «Մեգիէլ» ՍՊԸ-ից և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ից: «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 3-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «կամ համարժեք» արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

1. Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է պրոցեսորի բազային հաճախականությունը 1.2 ԳՀց, 3.4 ԳՀց: Այնինչ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշված է 2.3 ԳՀց բազային հաճախականությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հստակեցնել պրոցեսորի բազային հաճախականությունը, միաժամանակ, հաշվի առնելով, որ պրոցեսորի բազային հաճախականությունը չի կարող պակաս լինել 2.3 ԳՀց-ից:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում 2-րդ չափաբաժնում ընդգրկված ապրանքի համար սահմանված է առնվազն մեկ տարվա երաշխիք, այնինչ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից երաշխիքային ժամկետ չի նշվել:

3. 4-րդ չափաբաժնի մասով «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից օպերատիվ հիշողությունը նշված է 120 MB Ram, այնինչ այդպիսի հիշողություն չկա, անհրաժեշտ է շտկել:

4. «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված հավելված 1.1-ում 5-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է պրոցեսորի բազային հաճախականությունը 1.2 ԳՀց, 3.4 ԳՀց: Այնինչ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում նշված է 2.3 ԳՀց բազային հաճախականությամբ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հստակեցնել պրոցեսորի բազային հաճախականությունը, միաժամանակ, հաշվի առնելով, որ պրոցեսորի բազային հաճախականությունը չի կարող պակաս լինել 2.3 ԳՀց-ից:

5. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրում 5-րդ չափաբաժնում ընդգրկված ապրանքի համար սահմանված է մեկ տարվա երաշխիք, այնինչ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից կողմից երաշխիքային ժամկետ չի նշվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 10.03.2020թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

12.03.20202թ.գնահատող հանձնաժողովը շարունակելով նիստը, արձանագրեց որ «Մեգիէլ» ՍՊԸ-ն և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները և, որոնք համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Միաժամանակ, գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ն հայտ ներկայացնելու օրվա՝ 02.03.2020թ դրությամբ, ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (ցուցակում ներառվել է 26.02.2020թ.): Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 6 մասնակից.

| Չ/Հ | Ապրանքի նվանում | Չ/Մ | Քանակ | Նախահաշվային ընդհանուր գին | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի առաջարկ | | «Մեգիէլ» ՍՊԸ-ի առաջարկ | | «ՄԱԺԵՎ» ՍՊԸ-ի առաջարկ | | «Կոմպասս» ՍՊԸ-ի առաջարկ | | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի առաջարկ | | «Այունեթվորքս» ՍՊԸ-ի առաջարկ | | Նախահաշվային գնի սահմաններում նվազագույն գին ներկայացրած մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | Գինը առանց ԱԱՀ | Գինը ԱԱՀ-ով | |
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում | հատ | 200 | 41280000 | | | | | | | | | | | 34500000 | 41400000 | բանակցություն |
| 2 | Դյուրակիր համակարգիչներ | հատ | 100 | 22000000 | | | | | | | | | | | 18416666.66 | 22100000 | բանակցություն |
| 3 | Մոդեմներ | հատ | 35 | 14700000 | | | 10062500 | 12075000 | 7770000 | 9324000 | 11375000 | 13650000 | | | | | «ՄԱԺԵՎ» ՍՊԸ |
| 4 | Լազերային տպիչներ | հատ | 150 | 13500000 | 8075000 | 9690000 | | | | | 8737500 | 10485000 | 8312500 | 9975000 | 11187500 | 13425000 | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| 5 | Դյուրակիր համակարգիչներ | հատ | 200 | 44000000 | | | | | | | | | | | 36833333.34 | 44200000 | բանակցություն |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ինչպես նաև, որ առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար գնման հայտով նախատեսված գները՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշեց գների նվազեցման նպատակով 17.03.2020թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել վերը նշված բանակցությունների օրը, ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Հովսեփյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնահատող, Ռ. Զադոյան

Գնահատող Ծ. Մելքումյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

17.03.2020թ.
ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ԻՀՔ միջոցներով ապահովման բաժնի պետ, գնդապետ Ա. Հովսեփյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌՀՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ռ. Զաղոյան,
ՀՀ ՊՆ 31233 զորամասի տեխնիկ-մեխանիկ, ենթասպա Ծ. Մելքումյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ Ա.Ամիրյան:

***«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Ա. Ամիրյան)

1 Տեղեկություններ 17.03.2020թ. ժամը 11:00-ին կազմակերպված բանակցությունների վերաբերյալ.
2 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ 17.03.2020թ. ժամը 11:00-ին կազմակերպված բանակցությունների վերաբերյալ.**

(Ա. Ամիրյան)

1.1 17.03.2020թ. ժամը 11:00-ին կազմակերպված բանակցություններին ներկայացավ «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն: Բանակցությունների արդյունքում վերջինս 1-ին չափաբաժնի մասով առաջարկեց 41 200 000 ՀՀ դրամ ԱԱՀ-ով, իսկ առանց ԱԱՀ՝ 34 333 333.33 ՀՀ դրամ: 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով մասնակիցը նախկինում ներկայացրած գները թողեց առանց փոփոխության:
*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:.*

**2 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Ա. Ամիրյան)

2.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 20.03.2020թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա ընթացակարգում

1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Այունեթվորքս» ՍՊԸ-ն, 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՄԱԺԷՎ» ՍՊԸ-ն, 4-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ն:

2.2 Քանի որ առաջարկված գները՝ 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով գերազանցում են գնումն իրականացնելու համար գնման հայտով նախատեսված գները՝ հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը վերը նշված չափաբաժինների մասով հայտարարվեց չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին)

2.3 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

---

(Ա. Ամիրյան)

3.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-22/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

---

(Ա. Ամիրյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ա. Ամիրյան)

5.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-1/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Հովսեփյան

Գնահատող, Խ. Երիցյան

Գնահատող, Ռ. Ջաղոյան

Գնահատող Ծ. Մելքումյան

Գնումները համակարգող՝ Ա. Ամիրյան